



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտ նյուրը առեջելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅՈՒ ՀՈՊ.ԺՈՊ.ԿՈՄԱՅՏ  
ԳՅՈՒՂԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏԶԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ (4) 99

Հ. ՄԵՔՅԱՆ


ՀԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԶԵՐՆԱՐԿ



ԽԵՆՔՆԱԿԱՐ

1930

ՑԵՐԵՎԱՆ



636.92

ՀԱՅՈՒ ՀԱՊԱԺԱՊԱԿԱՏԱՐԱ  
ԳՅՈՒՂԱՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՁԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 4 (99)

---

Հ. ՄԵՔԵԱՆ

ՀԱՅԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ  
ԶԵՐՆԱՐԿԻ

124/85-  
A 39209



ՊԵՏԱՐԱՍ 1930 ՏԵՐԵՎԱՆ



Հրատ. № 1364

Գրառեպ. № 5457 (ը) Պոտ. № 785 Տիրաժ 3000

---

Պետհրատի լերկրութ տպարան Յերևանում.

## ՅԵԿՈՒՅԻ ԽՈՍՔ

Մանր ու խոշոր յեղջյուրավոր անասունների որանպանության, շուկան սպիտակ վորակյալ մասվ առանովելու և, վոր գլխավարն և, Անդրկովկասում լավամազ մորթու արտադրությունն ուժեղացնելու համար չափազանց կարեոր և ճաղարաբուծությամբ զբաղվելու:

Արտասահմանում ավելի լավ են հասկացել նրա սովորակառությունը, զբա համար ել այնտեղ՝ որինակելի հիմքերի վրա յեն զըել կենդանաբուծության այս ճյուղը:

Յելքուպական պետություններից յուրաքանչյուրը տարեկան մի քանի տասնյակ միլիոն ճաղարի մորթի յի զործագրում:

Անգլիան տարեկան 100 միլիոնի չափ մորթի յի ներմուծում Ավստրալիայից:

Լսնգոնի մասի պահանջը լրացնելու համար տարեկան 20—25 միլիոն ճաղար և մորթվում:

Թրանսիբայում մորթվում և 85 միլիոնի չափ, բացի յուր ներքին շուկաներից ստացած անգորական ճաղարի ըրթից, տարեկան զըեթե 1500 տոնն բուրդ և զնում արտաքին շուկաներից: Բըգեղեն զործվածքներից 40%-ի չափ զործարանների մեծ մասամբ ճաղարի բրդով են աշխատում:

Բելգիան իր զործարաններին բավարարելով, տառեկան մի քանի միլիոն մորթի յել արտահանում և Նրա Գինտ քաղաքի ճագարի մորթու զործարանում դրեթե 2000 բանվոր և աշխատում:

Ամերիկան ներմուծում և 100 միլիոն ճագարի մորթի և այլն և այլն:

Մեզ մոտ, նույնիսկ Խորհրդային Միության մասշտարով, կենդանաբուծության այս ճյուղը նոր և, և դժուվում և սաղմային վիճակում:

Կոլխոզներն ու սովխոզները պետք և զրադվեն կենդանաբուծության այդ դյուրին, ձեռնտու, եժան և բազմություն ճյուղով: Վերջին 3—4 տարիների ընթացքում Մոսկվայում հիմնվել և ճագարաբուծական կոոպերատիվ ընկերություն: Զեռք են բերվել ազնվացեղերի մի քանի տեսակները և զործը հետզհետե զարգանում է:

Զպիտի հապաղենք այդ զրադմունքը հիմնելու և մեր կոլխոզներում, վորին անտարակույս ընդհանագելու յեն համապատասխան հաստատությունները: Մեր դպրոցական-կուլտուրական աշխատավորները թե դյուղում և թե քաղաքում խելացի պայքար պիտի տանին հին նախապաշտումների գեմ և ապահովեն կենդանաբուծության այս նոր, ոգտակար ճյուղի ապագան Անդրբեկովկասում, ուր կլիմայական պայմաններն ու համապատասխան կերի առատությունը մնձապես նպաստում են զբան:


Այս հետնարկը ամփոփ ու զործնական ուղեցույց կլինի ճագարաբուծությամբ զբաղվող սկսնակների համար, վորոնք իրենց ձեռք բերած պաշարը կենդանի զործի ընթացքում կհիմնավորեն ու կըրացնեն և անձնական փորձերով:

Զենարկը կազմելիս ձեռքի տակ ունեցել ենք  
հետևյալ աշխատովուներն՝

- 1) Проф. Макаревкин А. Н. Кролиководство в сел. и гор. хозяйстве 1922 г.
- 2) Проф. Елагин П. Н. Кролиководство 1925 г.
- 3) Голубицкий С. Руководство к развед. кроликов 1916 г.
- 4) Дижбит А. М. Краткое руководство по разведению кроликов 1928 г.
- 5) Попов А. П. Уход за кроликами и разведение их 1920 г.
- 6) Гадзяцкий К. П. Сел. хоз. мех. и пух. кролиководство и коопер. сбыт его продуктов 1929 г.

Հեղինակ

---



## ՃԱԳԱՐԻ ՄԱԳՈՒՄԸ

Ճագարը կաթնասուն կենդանի յե, նապաստակների ընտանիքից, արտաքինով ել վերջինիս շատ նման, թեև ունի իր առանձնահատկությունները, վորով և ջոկվում ե վերջիններից։ Մինչև անդամ ցեղական թշնամություն գոյություն ունի այս յերկուսի մեջ։ Նույնիսկ եղն ու արուն զուգավորվելու շրջանում շատ դժվարությամբ են հաշտվում իրար հետ, Խառնը վելուց ել հազվագյուտ դեպքում ե սերունդ առաջանում։ Ճագարի և նապաստակների խառնուրդները կոչվում են լեպորիդներ։

Ընտանի ճագարները սերվել են վայրի ճագարներից, իսկ վերջիններս գետնի տակ ապրող նապաստակներից։ (ՅԵՄԼՅԱՀՆԵՍ ՅԱՅՎԱ) Վորոնցից և նրանք ժառանգել են հող քանդելու սովորությունը։

Վայրի ճագարների հայրենիքը պետք ե համարել Միջին ու Հարավային Ասիան և Աֆրիկան, գլխավորապես Միջերկրական ծովի հյուսիսային և հարավային ափերը։

Վայրի ճագարներն ավելի խորամանկ են, քան նապաստակները: Չնայելով նապաստակները ավելի արագավազ են, բայց և այնպես ճագարներն իրենց խորամանկությանը շնորհիվ ավելի հեշտությամբ են վտանգից ազատվում:

Վայրի ճագարներն ընտանիներից ավելի փոքր են: Նրանք ապրում են խմբերով: Ճագարները մեծ մասամբ դիշերային կենդանիներ են, վորի հետեանքով և խիստ զարդացել են նրանց տեսողությունն ու լուզությունը: Մոտավուավտանգի ժամանակ նրանք իրենց ընկերներին զգուշացնում են յետին վոտքի զարկով:

Ճագարներն ընտելացել են անհիշելի ժամանակներից: Զինաստանում ընտանի ճագարներ գոյություն ունեցել են մեզնից 2500 տարի առաջ, իսկ Յեվրոպայում 2000 տարի:

Ճագարները բուն շինում են գետնի տակ և զարմանալի արագությամբ կարողանում են փռել հողը այդ նպատակով: Փորվածքի խորությունը գետնի յերեսից մի մետր հաղիվ են հասնում:

Խուսափում են ցած ընկած, խոնավ, ճահճային տեղերից: Առանձնապես վախենում են ջրից:

Ապրում են 6—8 տարի, ճագ տալիս են 4—5 անգամ, յուրաքանչյուր ծնում են 6—12

ձագ, Զագերը սկզբում լինում են լերկ և աչքերը փակ, Հղիության շրջանը տևում է 30—32 որ:

Ճագարները տիպիկ խոտածարակ լինելով, նրանց մննդառության գործարանները ըստ ամենայնի հարմարվել են բուսական կերակրի:

Գլխի, մասնավորապես դեմքի, մկանները խիստ զարդացած են կերակուրը արագ ու լավ մանրելու, այլ և կրծելու հետևանքով:

Ստամոքսն առանց բաժանմունքների յե՞նման ձիու ստամոքսին և մարմինի համեմատությամբ փոքր ե, զորի պատճառով ստիպված են հաճախակի ոււեհը, բայց քիչքիչ։ Առանձնապես զարդացած են ճագարների աղիքները, մանավանդ հաստ աղիքն ու կույր աղիքը։ Բարակ աղիքները յերկար են։ Լյարդը մեծ ե, լեզու ոլարկը զարդացած։

Կարիչ ատամներն արագ են յերկարում—այս հանգամանքը հատուկ է բոլոր կրծողներին։ Մասամբ սրելու, մասամբ ել թույլ չտալու, զոր այդ ատամները չափից գուրս յերկարեն, նրանք մեծ հաճույքով կրծում են՝ մանավանդ կտրատում՝ ծառի մատղաշ ճյուղերն ու կեղեր։

Առաջին թաթերը կարճ են, հինգ մատանի, իսկ հետեւինը՝ չորս։

Եղ ճագարի արդանդը կրկնակի յե (յերկ-յեղյուր), Զվարանից ճանապարհները դեպի ար-

դանդի բաժանմունքները գնում են առանձին-  
առանձին, վորի հետևանքով և յերբեմն առաջա-  
նում ե կրկնաբեղմնավորում։

## ՃԱԳԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ—ԳՅՈՒ- ՂԱՏՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ ՅԵՎ ՆՐԱՆԻՑ ԱՏԱՑՎԱԾ ՄԹԵՐՔՆԵՐԸ

Գյուղատնտեսության վոչ մի ճյուղը չի կա-  
րող այնքան արդյունավետ լինել, վորքան ճա-  
գաբարուծությունն ե, յեթե միայն վերջինս լավ  
հիմքերի վրա յե դրված։

5 եղ 1 արուկից բաղկացած ընտանիքը տա-  
րեկան առնվազն 100—120 ռուբ. յեկամուտ կա-  
րող ե տալ, իսկ թանգարժեք մորթի ունե-  
ցողներին պահելու դեպքում, նույնիսկ ավելի։  
Կանոնավոր բազմանալու դեպքում, տարեկան 3  
անգամ ծնելով վերը հիշված ընտանիքը, յերրորդ  
տարում, 2000-ի ե համնում։

Ճագարները չափազանց դյուրությամբ հար-  
մարվում են կլիմայական պայմաններին և հա-  
սունանում են շատ կարճ ժամանակում (6—10  
ամիս)։

Ճագարի խնամքը դժվար չե, կարող են կա-  
տարել մինչև իսկ՝ յերեխաներն ու ծերունիները։  
ա) Մորթին.—Ներկայումս առանձնապես  
ուշադրության արժանի յե նրա մորթին, վորի

պահանջը շուկաներում մեծ ե վոչ միայն Խորհրդահին Միության սահմաններում, այլ և արտասահմանում: Ճագարի մորթին խտամազ ե, ինքնահատուկ փայլով ու փափուկ: Նա արժեքավոր ե մուշտակների, վերարկուների ոճիքի, ձեռնոցների համար և այլն:

Նրա մի քանի տեսակները ներկած, յերբեմն ել առանց ներկելու, փոխարինում են շուկայից հետզհետե պակասող թանգարժեք մորթիներին— «Շինշելին», «Ծովարջին» «Կենդուրային» և գընահատվում են 5—15 ռուբլի:

բ) Բուրդը.—Անպետք մորթուց հանած բուրդը գործադրվում ե փետրի գլխարկեերի համար, իսկ թավամազ ճագարեերից սանրելու կամ փետրելու միջոցով հավաքած բուրդը, վորի կիլոն գնահատվում է 15—40 ռուբլի, գործ ե ածվում գործվածքների համար: Ճագարի բրդի գործվածքները աչքի յեն ընկնում իրենց փափկությամբ ու լավ տաքացնելու հատկությունով: Ելեկտրականություն շատ պարունակելու համար այս բուրդը զերարադասելի յե համարվում հոգացավ ունեցողների, մինչև անդամ յենթագրվում ե, թոքախտավորների համար:

400 գրամմ բրդից ստացվում ե 350 գըրամմ մանած թել, վորից կարելի յե 2 շալ գոր-

ծել. 1 կիլոյից 130 սմ. լայնությամբ 2 մետր բրդի  
նուրբգ ործվածք և ստացվում:

գ) Կաշի.—Կաշին գործ և ածվում ձեռնոց-  
ների, պորտամանների և մինչեւ անդամ կոշիկնե-  
րի համար: Ցերկու ճագարի կաշին բավարարում  
և ամենամեծ վոտքի համար մի գույզ կոշիկ կա-  
րելու: Կատարված փորձերն ապացուցել են, վոր  
ճագարի կաշին իր հատկություններով յետ չի  
մնում վոչխարի, այծի ալլ և հորթի կաշուց: Ճա-  
գարի կաշուց պատրաստում են նաև շեվրո, լայկ  
և բարակ զամշ:

Ճագարի կաշին աչքի յե ընկնում իր փափ-  
կությամբ, լավ և նստում վոտքի վրա և տաք և  
պահում:

գ) Միսը—Միսը շատ համեղ է, յուղու ու  
մննդարար, մանավանդ մատղաշ ճագարինը՝ 6—8  
տմսական հասակում: Ճագարի միսը հիշեցնում  
և հավի կամ հնդկահավի միս, առանձնապես  
տապակած ժամանակ: Դյուրամարս ե, ոգտա-  
կար, թե յերեխանների և թե նույնիսկ հիվանդ-  
ների համար—իբրև սպիտակ միս:

Ճագարի միսը նապաստակի մսին նման չի  
վնչ համով, և վնչ ել արտաքին տեսքով: Նա  
փափուկ ու քնքույշ ե քան նապաստակինը, շնոր-  
հիվ այն հանդամանքի, վոր ճագարների մկան-  
ները զուրկ են դրսից պատող կոշտ թաղանթից,

Բացի այդ նապաստակի միուր թթվաշ եւ ու անցուց:

Մսի կիլոն գնահատվում է 1 ռ.—1 ռ. 50 լ.

## ՄՍԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

1. մասը պարունակում է	բորոկածնային նյութեր	ճարապ ջուր
1.—Ճաղարի միուր	32,41 տոկ.	4,71 <sup>0</sup> / <sub>0</sub> 61,19 <sup>0</sup> / <sub>0</sub>
2.—Տավարի միուր	20,71 »	1,44 » 76,27 »
3.—Հաղի միուր	19,72 »	0,42 » 70,06 »
4.—Վոչխարի միուր	16,62 »	0,82 » 78,84 »

Ճաղարի միունինչպես բաղադրության տախտակից պարզ յերվում է, յուզոտ եւ ու հարուստ բորակածնային նյութերով:

Միևնույն պայմաններում տավարի մսի սպիտակուցը մարսվում է ստամոքսում  $62^0/_{0}$ -ով, ճաղարինը  $90^0/_{0}$ -ով: Տավարի միուր ստամոքսում քայքայվում է 3 ժամ 25 րոպեյում, ճաղարինը 2 ժամ՝ 15 րոպեյում:

յի) Ճարպը.—Նրա ճարպը սպիտակավուն եւ համարվում է լավագույն ճարպերից մեկը: Գերացրած ճարպը ամբողջապես ծածկվում է ճարպի շերառվ, փորից կարելի յե 200—250 գրամ ճարպ հավաքել:

Ճաղարի միուր, չնորհիվ ճարպոտ լինելուն,

մսի պահածոյի համար շատ լավ նյութ եւ Նրան  
կարելի յե նույնիսկ իր սեփական յուղում  
տապակել:

Ճագարի ճարպը արտասահմանում գործ ե  
ածվում մեծ մասամբ պարֆյումերիայի համար—  
պատրաստում են ոծանելիքներ:

զ) Սոսնձային մասերը.—Ճագարների ա-  
կանջները, թաթերը, պոչը, յեղունկերը այլ և  
կաշվի անպետք կտորները գործադրվում եւ սո-  
սինձ պատրաստելու համար։ Ճագարի սոսինձը  
հյուսնոցային ամենալավ սոսինձն ե համարվում,  
և գործադրվում ե նուրբ աշխատանքների համար։

ը) Այլ մասերը.—Բարակ աղիքներից պատ-  
րաստում են յերաժշտական գործիքների համար  
լարեր, փորոտիքների անպետք մասերը խողերի  
և հավերի կեր են ծառայեցնում, աղբը գործա-  
դրում իբրև պարարտանյութ։ Մեզը բացի պա-  
րարտանյութերից, նաև գործադրվում ե դեղա-  
տըներում։

Ճագարը ոգտագործվում ե լաբորատորիա-  
ներում սրսկումներ ու փորձեր կատարելու հա-  
մար, վորով հսկայական ծառայություն ե մա-  
տուցվում մարդկության։

## ՃԱԳԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Ճագարաբույծները կլիմայական պայմանների ազդեցությամբ ու ընտրության միջոցով, ստացել են բազմաթիվ տեսակին ճագարներ։

Հայանի յե ճագարների հետեւյալ տեսակները.—

1. Հասարակ ճագարներ
2. Աղնվամորթ »
3. Մսացու »
4. Բրդոտ (թավամաղ) »

### 1.

#### ՀԱՍԱՐԱԿ ՃԱՐՆԵՐ

Սրանք կոչվում են նաև ռուսական խշիկրեր (Երսիկի): Պատկանում են մանր տեսակներին, հազվագյուտ դեպքում են կշռում 2 կիլոյից ավելի։ Լինում են բազմագույն ու բազմերանգ, յերբեմնի ել ծաղկոտ (չալիկ): Այս ճագարները դիմացկուն են, և տեղական պայմաններին ըստ ամենայնի հարմարվող են ի ու խնամքի վերաբերմամբ խստապահանջ չեն։ Նըրանց միսը կոշտ ե, այնքան ել համեղ չե։ Բազմանում են շատ լավ։ Ցուրաքանչյուր անգամ բերում են 6 – 12 ձագ։ Եղերն անգնահատելի

մայրեր են և ճագերին կերակրելու և ընդհանուրապես նրանց խնամելու տեսակետից:

Հասարակ ճագարներ պահելը միտք չունի, յեթե հնարավոր և բազմատեսակ ցեղային ճագարներից պետք և ձեռք բերել մի վորեւ տեսակը։ Մկնարկ ճագարաբուծի համար միայն հասարակ տեսակի ժամանակավոր զարդացնելը ձեռնտու յե, վորպես ավելի քիչ խնամք պահանջող ու եժանագին։ Մըանց եզերի լավագույնները ցեղային արուների հետ զուզավորելով, բավականին լավ տեսակի ճագարներ են ստացվում, յեթե մի քանի սերունդ լավագույն եզերը զուզավորում ենք ազնվացեղի հետ։ Նման յեղանակով ազնվացումը կոչվում է մետիզացիա։ Մետեղացիայի ժամանակ կիսացեղային հայրերից պիտի խուսափել այլապես այդպիսիների սերունդը հատկություններով շատ ավելի շեղումներ կունենա, քան նրանց խսկական, զտարյուն պապը։ Խորհուրդ ենք տալիս հասարակ ճագարները գործադրել իբրև ծծմալրեր այն դեպքում, յերբ ազնվացեղների ճագերը շատ են, կամ զանազան նպատակներով ուզում եք մորը կերակրելու հոգսից ազատել։ Դրա համար ցեղալինների հետ միաժամանակ պիտի հղիացնել հասարակ ճագարներին, վորպեսզի միաժամանակ ծընեն։ Ծնելուց հետո հասարակ մորն առանձնա-


ցնում են, նրա ձագերը վոչնչացնում ու նրա  
տեղը դնում ցեղային ձագերը, ու ծածկում հա-  
սարակ ձագարից նախորոք փետած բրդով:

Նման գեղքերում հասարակ մայրերը բնու-  
մը դադանի զրած ձագերին հեշտությամբ են ըն-  
դունում ու կերակրում են վորպես իրենցը:

## 2. ԱԶՆՎԱՑՈՐԹ


### Ա. Կապույտ նազար

Այս ճադարը նաև կոչվում է վիյենական (տես նկար № 1), գույնը և աչքերը կապույտ են



## Նկար 1.

(բաց ու մուգ յերանգով), ականջները ցից: Եզրի կը քառականը զարդացած է (դուրս լնկած): Դիմացկուն ին ու լավ բազմացող:



Կշռում ե 3—4 կիլո յերբեմն ավելի Գույշը հաջող պահպանում եւ Բացանալու գեպքում կարելի յե զուգավորել սև Փլանդրի հետ, և ստացած մուգ կապույտ զույգերից, ընտրության յեղանակով վերականգնել մուգությունը՝ Վորովհետեւ այս տեսակը հաճախակի յենթակա յե ոյլասերման, ուստի և զուգավորելը կնպաստե ցեղային հատկությունների պահպանման: Վիյենական ճագարները հարդի յեն շուկայում կապույտ զույնի և զուրեկան մորթու համար, մանավանդ յերբ միորինակ յերանդ ե ունենում:

Ընդհանրապես հասակի փոփոխության հետ՝ փոփոխության յենթակա յե և նրա գույնը:

Աչքի յե ընկեր վոր ճագարների հասակի հետ կապված գունափոխության այս յերանույթն ուժեղ արտահայտվում ե կապույտի վերաբերմամբ: Հաջող յերանդ ունենում ե տարեկան ճագարը—վորից հետո քանի մեծանում ե՝ այսքան բացանում—դեղնում եւ:

Ժառանկականության հետևանքով կապույտ ճագարներից յերբեմն ծնվում են դեղին ճագարներ: Պատահում են և Վիյենական սպիտակներ: Սրանք ավելի մանր են, աչքերը կապույտ: Սպիտակները լավ պահպանում են գույնը՝ միապաղաղ սպիտակ են:

Կապույտ ճագարների միսը փափուկ ե ու համեղ, հասունանում են 8—10 ամսում:

Բ. Արծաթափայլ

Արծաթափայլ ճագարների հայրենիքը Հնդկաստանն է, վորտեղից և նրան Յեվրոպա բերել են 16-րդ դարում։ Փորտուգալիայի նավաստիները, և առանձնապես ուշազրության ու խնամքի յե արժանացել Հարավային ֆրանսիայում։ Մազերը հիմքում պողպատագույն են, կամ կապտագույն, ծայրերում սպիտակ ու սև, վորը արծաթի փայլ և տալիս նրա խտամագ ու փարթամ մորթուն։ Փորի տակ սպիտակավուն եւ Արծաթափայլ ճագարները նոր ծնված ժամանակ մեծ մասամբ սև են, ճակատը սպիտակ։ Ընդհանրապես փոքր ժամանակ մուգ գույն ունին, քանի մեծանում, այնքան բացանում ե գույնը։ Ծերության հասակում ել գրեթե սպիտակում եւ Աչքերը մուգ շագանակագույն ե ու խոշոր, պարանոցը կարճ, ականջները ցից, կուրծքը լայն։

Կշռում են 3—4 կիլո, հազվագյուտ գեղքերում միայն 5 կիլո։ Հասունանում են 6—8 ամսում, բերում են յուրաքանչյուր անդամ 6—8 ձագ։ Արագ չաղանում են և շատ անգամ ել շատ չաղանալու հետևանքով մնում են ամուլ։ Եզերը անգնահատելի մայրեր են, հեշտությամբ ընտելանում են խորթ ձագերին։ Դիմանում են 20—25<sup>0</sup> զրտերին։

Արծաթափայլ ճագարի մորթին արժեկուվորդէն, յերբ արծաթափայլը միապաղաղ և ներկայում այդ մորթին մեծ տեղ է զբավել արտասահմանյան շուկաներում:

Արծաթափայլերի բազմաթիվ տեսակները կան, վորոնցից առանձնապես աչքի են ընկնում ֆրանսիական «Շանզայնը» և «Անգլիական արծաթափայլը»։ Անգլիականը ավելի մանր է, լինում են 3 յերանգի՝ բաց, միջակ և մուգ—սև ու սպիտակ մազերի հետեւյալ փոխհարաբերությամբ 1:15, 1:10, 1:5։ Պատահում են նաև զունավոր արծաթափայլեր, սակայն վորովինեան մորթիների յերանգները դժվարությամբ են իրարու բռնում, ուստի մեծ արժեք չունեն։

Յերբեմն պատահում են հասարակ ճագարներից ծնված, արծաթափայլը հիշեցնող ճագարներ, վորոնց մազերը սև ու սպիտակ են (վոչ կեսից, այլ ամբողջությամբ)։ Սա հետևանք է սև ու սպիտակ ճագարների զուգավորելուն և նման գեպքում այս յերեսույթը չպիտի խառնել արծաթափայլերի ցեղային հատկության հետ։

### գ. Եինչիլ

Վերջին տասնյակ տարիների ընթացքում արտառահմանում առանձնապես աչքի յե ընկել Շինշիլ կոչված ճագարը, վորը իր մորթու նը-

մանությամբ փոխարինում ե ամերիկական կըք-  
ծող վայրի կենդանու՝ շինշիլի մորթուն։ Այս  
մորթին հարգի յե, շնորհիվ իր ինքնահատուկ  
զեղեցկության, մանավանդ վոր նա շուկայից  
սննետանում եւ։

Շինշիլ ճագարի մազերը հիմքում մոխրա-  
կապտագույն են, հետզհետե բացանում են ծայ-



Նկար 2.

բերը սևանում։ Բաց մոխրագույն մորթու վրա  
սև գծերը կարծեք ոձապտույտ դալարումներ են  
կատարում—ասենք յերանգները խաղում են։

Սրանք կշռում են 2—4 կիլո: Կազմվածքը համաչափ ե, կուրծքը թեթև դուրս ընկած (տես նկ. № 2): Աչքերը մուգ շագանակագույն են, կամ կապույտ-մոխրագույն: Թերություն են համարվում մորթու վրա ընկած սպիտակավուն խալերը և ծոծրակի կամ թիկունքի վրա դարնված դեղին շերտը:

Եինշիլը եր ցեղական զարգացման ընթացքում գույնի ու յերանգների տեսակետից բավականին աչքի ընկնող շեղումներ ե կատարում:

#### դ. Ռուսական աճիսանման նազար

Սրանց ծագումը Միջին Ասիական ե, հավանորեն Զինաստանից սերված, վոր Ռուսաստան փոխագրվելով կլիմայական պայմաններին հեշտությամբ հարմարվել են: Արտասահմանում նա հայտնի յե «Ռուսական», «Միբիրական», «Հիմալայական» անուններով: Այս տեսակը բողմացվում ե հատկապես մորթու լսվության պատճառով: Փոքր ե. կշռում ե  $1\frac{1}{2}$ —2 կիլո, հազվագյուտ դեպքերում 3 կիլո: Գույնը սպիտակ ե, յուրահատուկ ձյունափայլով, ականջները, թաթները, պոչը և դունչը սև յերեմու ել շագանակագույն, վոր ծերության հասակում հետզհետե բացանում ե: Մազերը կարճ են ու խիտ: Թանգ-

Ե գնահատվում 6—8 ամսականն ճագարի մորթին՝ մաղափոխության շրջանից հետո:

Փոքր հասակում նրա մարմինը միապաղաղ սպիտակ է, 1 և կես ամսականից դեղնում են ականջները, թաթերը, պոչը և զունչը, ապա հետզհետեւ սեանում: Մինչեւ չորս ամսականն զառնալը շատ անդամ դժվարէ լինում տեսակը վորոշել: Աչքերը կարմիր ու շաբդուն, ինչպես ընդհանրապես սպիտակամորթերն են, կայտառ ու դիմացկուն, յուրաքանչյուր անդամ բերում են 4—10 ձագ: Ցրտերին դիմանում են, լավ գերանում են, կերի խնդրում պահանջկոտ չեն: Շատ



### Նկար 3.

Հասունացող են, մայրերը որինակելի: (Տես նկ. № 3): Միսը համեղ է ու փափուկ:


Յեթե ընտրական յեղանակով առաջ բերվի սուսականի մեծաքաշ ճագարներ, գոնե Յ կիլո կշռով, շատ ավելի ձեռընտու կլիներ արև ճագարների բազմացումը, մանավանդ սկսնակ կոլխոդների համար։ Մետեղացիայի ժամանակ ել (տարբեր տեսակների հետ զուգավորելուց), յերբ հայրը սուսական ե, այնքան և արյունը ուժեղ, վոր սերունդում դոմենանդը մնում և միշտ ինքը Լավ և խառնել սպիտակ, ֆլանդրի կամ սպիտակ հսկայի հետ և զույնն ու փայլն և ողահալանում, և ազգում և մեծության վրա։

## ՄՍԱՑՈՒՆԵՐ

ա. Ֆլանդր

Մսացուներից նշանավոր և բելգիական ֆլանդրը կամ բելգիական հսկան, վորի մեջքի յերկարությունը 60—90 սմ. և Սա իր անունը ստացել է Բելգիայի ֆլանդրիա շրջանից։ Նա արտաքինով նապաստակն է հիշեցնում։ Կազմվածքով հաղթանգամ ե, ականջները ցից են, լայն ու մըսալի, վոտքերը զարգացած, եղերի պարանոցը դուրս ընկած։ Կենդանի քաշը 6—8 կիլո յե, նույնիսկ պատահում ե ավելին։ Լինում են տարբեր դույների, ծխագույն, մոխրագույն, կենդու-

բային նմանվող և այլն։ Մազերը կարձ, խիտ ու փափուկ են, աչքերը խոշոր, փայլուն ու մուգ դույնիւ հաստնանում են 8—11 տասում։ Մորթին գույների բազմերանոց լինելու հետեւանքով



#### Նկար 4.

այնքան ել արժեկ ավոր չե, նա ձեռնառու յե մսի և քանակի և վորակի տեսակետից։

Կերի խնդրում պահանջկոտ չեն։ Գերանում են հեշտությամբ համեմատաբար իրար հետ հաշտ են ապրում։ (Տես նկ. № 4)։


#### բ. Սպիտակ հակա

Այս տեսակը ճագարի բազմացնելու նախապատվությունը գերմանացիներինն եւ Պատկանում ե մեծ տեսակներին, գույնը մաէուր սպիտակ ե, մազերը խիտ ու փափուկ, աչքերը կար-

միք, պատահում են և՝ կազուտաչյա հսկաներ սերված կապույտներից:

Միջին կշիռը 5,5 կիլո յի, թեև յերբեմն հասնում է մինչև 7 կիլոյին հասունում են 8—10 ամսում, վորից առաջ չպետք է թողնել բեղմնափորելու: Եզերի սեռական հասունության գուգադիպում ե նրա պարանոցի զարգանալը:

Սպիտակ հսկան հաջող պահում ե գույնը, յեթե նույնիսկ ֆլանդրի հետ ե գուգավորվում: Վորովհետև սպիտակ գույնը կարելի է ներկել ցանկացած գույնի, ուստի այս հանգամանքը սպիտակ հսկաների մորթը բավականին արժեքավոր



Նկար 6.

ե դարձնում: Սրանք ել ֆլանդրի նման յենթակա յեն այլասերման, աչքաթող չպիտի անել մի կողմից ընտրության սկզբունքը, մյուս կողմիդ ել արյունը հաճախ ողիտի թարմացնել նոր խառ-

նուրդով, (ազգակցական մոտիկ կառլ չունեցող ճագարների հետ, ցանկալի յե սպիտակ ֆըլանդը):

Սպիտակ հսկաների գուգավորելը յերբեք չպիտի կատարվի բուրդը փոխելու շրջանում, այլավես կանգրագառնա նրա սերունդի մորթու հատկության վրա: (Տես նկ. № 5):

Մսացուներից են նաև Պատագոնյան ճագարները, վոր արտաքինով գրեթե հիշեցնում ե ֆլանդը, չոենոսի ծաղկութը (խայտաբղետ) ֆրանսիական և անգլիական կախականջները:

Այս տեսակների վրա առանձնապես չարժե կանգ առնելը:

#### 4. ԲՐԴՈՏԸԸ


##### ա. Անգորական

Բրդոտների լավագույն ներկայացուցիչն ե անգորական ճագարը, վորի հայրենիքը Ասիան ե: (Տես նկ. № 6)

Սա բավականին դիմացկուն ե, հեշտությամբ հաշտվում ե պայմանների հետ, մանավանդ ցըրտերի, վորից նա պաշտպանվում ե յուր բրդով:

Մարմինը ծածկված է յերկար մազերով, վոր ավելի նոսր ե քան կարճամազերինը, սակայն հիմնական մազերի արանքում դանվում ե

և խիտ աղվամազը, վոր միքանի անգամ նրա  
մազից յերկար ե, բարակ ու փափուկ ( $10-20$   
սանտիմետր յերկարությամբ): Անգորական ճա-  
գարը լինում է գլխավորապես սպիտակ, սև, պա-  
տահում են և ծխագույն ու կապտագույն: Լա-



Նկար 6.

վագույնը համարվում է սպիտակը: Կենդանի  
քաշը  $2\frac{1}{2}-4$  կիլո յի: Հասունանում են  $7-8$   
ամսում: Կշիռն այդ հասակում հասնում է  $2-3$   
կիլոյի: Բերում է յուրաքանչյուր անգամ  $4-8$   
ձագ: Միսը համեղ ե:

Անգորական ճագարների բազմացնելը ձե-  
ռնառու յէ բրդի համար, թեև վերջերսնրա մոր-  
թին վերապատրաստելով վաճառում են վորպես  
սպիտակ աղվեսի մորթի. կոչվում են «Փոկսին»:

և արժեքով Շինշիլ ճագարի մորթուց դրեթե  
յետ չեն մնում:

Անգորական ճագարներ բազմացնելը ձեռլն-  
տու յե գլխավորապես բրդի համար, սակայն նա  
ավելորդ խնամք և պահանջում սանդրելու և մա-  
քուր պահելու համար: Անգորական ճագարների  
խնամքը գժվար և առանձնապես մեր դյուզա-  
ցիների համար, վորոնք ընդհանուր առմամբ  
կենդանիներ խնամելու խնդրում որինակելի չեն:

Ովքեր պահում են այլ տեսակի ճագարներ,  
անգորականը բավականին կղծվարացնի նրանց  
գործը:

Յուրաքանչյուր ճագար տարեկան տալիս  
է 200—400 գրամ քնքույշ մետաքսանման բուրդ  
10—20 սանտիմետր յերկարության, վոր իր նըր-  
բությամբ, թեթևությամբ, փափկությամբ ու  
տաք պահելու տեսակետից բոլոր տեսակի բըր-  
դեղենների մեջ առաջին տեղն է գրավում: Կի-  
լոն գնահատվում է 15—40 ոռորդի: Ինչքան ճեր-  
մակ, յերկար ու փափուկ են, այնքան ել բարձր  
է նրա արժեքը: Աղվամազը հավաքել կամ զգուշու-  
թյամբ փետրելու միջոցով: Հասունացած աղվա-  
մազը հիմքից թուլացած լինելով հեշտառթյամբ  
պոկվում է: Պոկած աղվամազի տեղ նոր բուսնո-  
ղը 1 և կեսից — 3 ամսում հասունանում եւ: Աղ-

վամազի կանոնավոր արտադրությունը ճագարի տարին լրանալուց հետո յեւ լինում:

Ժամանակին չսանրելը, կեղտոտ պահելը, ծանր վիճակ և ստեղծում ճագարի համար – թաղիքների ծանրոցներ կազմելով մարմի վրա, աղվամազը կորցնում և իր արժեքը:

Ժառանգության հետևանքով բրդոտ ճագարներ են ծնվում և ըստարակ ճագարներից Այդպիսի ճագարներից ընտրության յեղանակով կարելի յեւ ստանալ յերկարամազերի տեսակը՝ անգորական: Թե՛ սրանք, և թե՛ Ռուսաստանի կենարոնական մասերում գոյսություն ունեցող յերկարամազ խլշիկները չպիտի զուգավորել իսկական անգորականի հետ: Սրանք մանր են, մազերի յերկարությունը 4—5 սանտիմետր, տարեկան տված բուրդը 50—60 գրամից չի անցնում, հետևապես և միանգամայն անձեռնտույն: Ցեղե հնարավոր չե անգորական զույգը ձեռք բերել, թանգության և այլ պատճառներով, ապա հակառակ գեղքում գոնե պիտի ձեռք բերել անգորական արու և տեղական լավագույն մայրերի հետ զուգավորելով առաջ բերել անգորական՝ մետեղացիայի միջոցով:

ՎՈՐ ՏԵՍԱԿԻ ՑԱԳԱՐՆԵՐ ՊԱՀԵԼԸ ԱՎԵԼԻ Ե ԶԵ-  
ՌԵՆՏՈՒ

Այս հարցին պատասխանելը՝ տեղի պայ-  
մաններից անկախ—դժվար եւ:

Անհրաժեշտ ենք համարում պարզել հետե-  
ղյալ խնդիրները՝

ա) Մսացու, ազնվացեղ ճագարները ծան-  
րաքաշ և յուղոտ են, իսկ, դրա փոխարեն, մանր,  
ազնվացեղ ճագարների միուր ավելի փափուկ,  
համեղ ու վուկորները բարակ են:

բ) Մանրացեղերն ավելի շուտ են հասու-  
նանում, սակավապես են և դիմացկուն:

գ) Արժենքավոր մորթի ունեցողներն ընդ-  
հանրապես փոքր ճագարներն են, բացառությամբ  
սպիտակ հսկային:

դ) Խոշոր ճագարները համեմատաբար ավե-  
լի թմրած, դանդաղաշարժ են, շատ են յենթա-  
կա հիվանդությունների և ավելի խնամք են պա-  
հանջում:

ե) Բեղմնավորվելու և ճագեր խնամելու  
տեսակետից ազնվացեղերի մեջ անհաջող մայ-  
րեր շատ են լինում:

ը) Կլիման ու կյանքի պայմանները (տեղը,  
մանունդը, խնամքը) խոշոր ազդեցություն ու-  
նեն՝ ազնվացեղերի ժառանգություն ստացած  
հատկությունների վրա:

թ) Այլ կլիմայական պայմաններում տուա-  
ջացած վորհե աղնվացեղ մեր կլիմայական պայ-  
մաններում կարող ե արդյունքի տեսակետից  
բացասական հետևանքներ առար:

Պիտի խուսափել շատ տեսակներ զարգաց-  
նելուց: Լավ ե կանգ առնել մի կամ յերկու տե-  
սակի վրա, խելացի ընտրությամբ, նայած թե  
վորն ավելի լավ կզգա իրեն մեր միջավայրում:

### ՃԱԳԱՐՆԵՐԻ ՏԱՐԻՔԸ

Ճագարները ապրում են 4—8 տարի, լա-  
վագույն դեպքում 10 տարի: Սակայն արդյու-  
նաբերության մեջ պիտի պահել մինչև 4 տա-  
րեկանը, կաշվի արդյունաբերության դեպքում  
միայն՝ ավելի:

Չորս տարեկանից սկսած արուների սեռա-  
կան եներգիան հետզհետե պակասում է: Սերբն-  
դի մոտիկ աղգակցական կապ չստեղծելու տե-  
սակետից ել ձեռնտու չեն յերկար ոգտագործա-  
դրելը (այլասերման վտանգից պիտի խուսափել):

Չորս տարին անցնելուց հրտո միսը զգալի  
կերպով կոշտանում է, մորթին գունատվում,  
բուրդը նոսրանում:

Արտադրելու ամենալավ հասակը 1—3 տա-  
րեկանն է:

Ճագարների տարիքն արտաքին նշաններով

դժվար ե վորոշել, մանավանդ միջին տարիքը՝  
2 - 5 տարեկանը:

Տարիքը զլխավորապես վորոշում ե յեղունդների յերկարությամբ, կոշտությամբ, մազերի նրբությամբ, և ճագարի գանցաղաշարժությամբ։ Առամները սեանում են, աչքերը խամբում են, արտասվակալում, եղերի փորը կախ ե ընկնում։ Տարիքը վորոշելու ամենալավ միջոցը տօհմային զիրքն ե, յեթե այդպիսին պահված ե։

### ՊԱՀԵԼՈՒ ՑԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ճագարը կարելի յեպահել պարսպած բակերում, սալահատակած բներում, և վանդակներում։

Յեթե բակում ենք պահում, բակի զիրքը բարձր պիտի լինի, չոր ու ավագային։ Պատերը պիտի լինեն քարաշեն կամ աղյուսից, հիմքը  $\frac{1}{2}$  մետրից ավելի խորացած հողի մեջ, բարձրությունը  $1 - 1\frac{1}{2}$  մետր։ Հակառակ դեպքում՝ ճագարը պատի տակից փորելով, կամ վերեկից ցատկելով, կարող ե գուրս գալ։ Բակը դյուրացնում ե ճագարաբույծի աշխատանքը, ունենալով հետեւյալ մի շարք պակասավոր կողմերը։

ա) Բակում ճագարների բեղմնավորությունը պատահական ե դառնում և վոչ ծրադրված, վոր շատ անգամ հասցնում է այլառելման, աղնը վացնելու փոխարեն։

բ) Ճագարի համաճարակ հիվանդությունների ժամանակ անկարելի յե լինում վարակն ու նրա աղբյուրը զատել, վորին և զոհ են զնում շատ անգամ տվյալ բակի բոլոր ճագարները:

գ) Ճագարները թաղնվելով բների մեջ, ճագարաբույծին հնարավորություն չեն տալիս ուսումնասիրելու նորատակով դիտողություններ կատարել:

դ) Հակասանիտարական զբություն և սակեղման հողի տակ պատրաստված բներում, շատ անգամ սատկած ճագերը մնում են բներում ու նեխվում:

Բակերից ավելի հարմար են սալահատակած փոքրիկ բներ՝ առանձին մուտքերով, յուրաքանչյուրը մոտավորապես 25 քառ. մետր տարածությամբ 5—8 եղի համար։ Առատ ոդ ուլույս ստանում են պատուհաններից, ավելի լավ և արևմտյան պատը ցանցապատ անել:

Ազատ տարածությունները պիտի ցանել, ձեռքի տակ պատրաստ կանաչ մննունդ ունենալու համար, վորը շատ կդարձնի մննդի խընդիրը անակընկալների ժամանակ։ Լավ և առվույտ ցանելը։

Ճագարաբույծներին, մասնավորապես սկըսնակ, խռիսւրդ ենք տալիս կապվել վանդակային սիստեմի հետ, վորի ընթացքում պահվող ճա-

զարների ուսումնասիրության և ազնվացման դործը շատ ավելի հաջող կընթանա, թեև պիտի նկատի ունենալ, վոր ճադարաբույծի աշխատանքը յեռապատկվելու յե, վորովինեաև բոլոր տեսակի աշխատանքներնւմ գործ պիտի ունենա առանձին-առանձին ինտանիքների, մինչև անդամ հատ-հատ ճադարների հետ:


Չպիտի մոռանալ վոր սա ազնվացնելու միակ սիստեմն է, և զարմանալու չե, վոր արտասահմանում միայն այս սիստեմն է կիրառվում:

Վանդակները պիտի աշխատել վոր եժան նստեն, առանձին բարդություններ չունենան, սակայն և ճադարների համար անհրաժեշտ պայմաններից զուրկ չպիտի լինեն վանդակները, թեկուզ սովորական արկղներ լինեն. յերկարությունը՝  $\frac{3}{4}$ —1 մետր, լայնությունը՝  $\frac{1}{2}$  մետր, նույնքան ել բարձրությունը։ Արկղի յերկար կողմերից մեկը ձողիկներով պատել, ձողիկները վոչ շատ հեռու լինեն, վոր ճագերը զուրս գալ կարողանան, վոչ ել այնքան մոտ, վոր խիստ մթնեցնեն վանդակը։ Հատակը շարժական ու ծակոտեն, մի քառակուսի սանտիմետրից վաշ մեծ անցքերով՝ վոտքերը ներս չխրվելու համար։

Նման վանդակում կարելի յե պահել արու հասունացած ճադարներին՝ մի-մի հատ, 3—5 պմսականներին՝ 2—3 հատ։ Վանդակներին փո-

խարինել կազող են և կիսած տակառներ։ (տես  
նկար № 8):


Մայրերէն համար պետք եւ վերցնել 1 մ.×3



Նկ. 7.

**1 մ.×<sup>3</sup>/<sub>4</sub> մ.×<sup>3</sup>/<sub>4</sub> մ. մեծության վանդակ, վորի յերկար պատից 20 սմ. ի վրա միջնապատով կտրել, թողնելով մի այնպիսի անցք, վորտեղից ճագարն անց ու դարձ անել կարողանաւ Յերկու մասերն ել կունենան իրենց դըռները՝ առաջինը ձողիկներով, յերկրորդը՝ խուլ, վորի հետևանքով յերկրորդ մասը մութ կլինի։ Մութ անկյունն անհրաժեշտ ե վոչ միայն ճագեր հանելու համար, այլ և ընդհանրապես հանդստանալու կամ պատրսպարվելու համար վախի և ջղայնանալու դեպքերում։ Հատակը շարժական պիտի լինի, յերկու տարրեր մասերից բաղկացած, առանձինառանձին մաքրելու համար, վորտեղի վանդակը չկրծեն, լավ ե պատերը յերեսից կարբուլինեռումով ոծել**

Տեղի խնայողության դեպքում, կտրելի յէ  
վանդակները պատրաստել մի քանի հարկից,




Նկ. 8.

ինչպես որինակ ամերիկական յերկհարկանի վանդակներն են: (Տես նկ. №—8):

Հղիության շրջանում կառաջարկելինք խուսափել նման վանդակներից, վորովհետեւ յուրաքանչյուր հարկի յեռ ու զեռը պիտի անդրադառնա այլ հարկում պահպող ճագարների վրա, վրդովելով նրանց հանդիսաբար:

Լավ է ունենալ զբոսանքի առանձին վան-



Նկ. 9

դակ (տես նկար №—9): Ճագարներին յերբեմն կարող ենք վանդակով մի քանի ժամ թողնել կանաչների մեջ խոտ կրծելու, յեթե հատակը շարժական ե:

Վանդակները պիտի տեղափորել չոր, լույս ու ողառատ սենյակում, իսկ տարվա տաք յեղանակներին դուրսը, արևից, աձրեից ու քամուց պաշտպանված տեղում: Դռնակները պիտի դարձնել դիպի հարավ-արևելք, թեև ամառվա ըն-

թացքում չափազանց ներս թափանցող կիզիչ  
արել ճագարներին ուժասպառ ե անում, տարվա  
մնացած յեղանակներին ել կենսաբար ազգեցու-  
թյուն ե ունենում նրանց վրա

Ճագարաբույժ Գագգյացկին, վոր Մոսկվայի  
«կրոլիկ» կոպերատիվ ընկերության հիմնադիր-  
ներից մեկն ե, առաջարկում ե «փակ պարկեա-  
ներ» Այդ փակ պարկեաները հիշեցնում են  
սալահատակած սենյակներ, մի կողմից յերկար  
արկղներ են, շինված կերի համար, վոր միա-  
ժամանակ ողտագործվում են և՛ ճագարները  
բոնելու համար: Կերի արկղները ավելի հար-  
մար ե շինել արեմտյան կամ հյուսիսային  
կողմից:

## ԵԵՂԱՅԻՆ ՃԱԳԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Եեղի համար պահպելիք ճագարների ըն-  
տրության ժամանակ պիտի նկատի ունենալ  
հետեյալ պայմանները: —

ա) Ճագարի առողջությունը, բ) կազմված-  
քը, գ) տարիքը, դ) սովորությունները, յե) ժա-  
ռանգած ցեղային հատկությունները:

բ) Ճագարը պետք ե առողջ ու աշխուժ  
լինի, ախտըժակը տեղում, աչքերը պարզ (վոչ  
արտասվակալ), քիթը մաքուր, կղկղանքը չոր:

դ) Մարմնի մասերը համաչափ պետք ե լի-

նեն, հետեւը կլոր, թաթերն ուղիղ, ականջները  
ցից և մարմնի <sup>1/4</sup> յերկարության Արույի կուրծ-  
քը զարգացած, եղի կոնքը լայն, ստիճաների  
պտուկները 8-ից վոչ պակաս:

դ) Համապատասխան տարիքը 1 և կեսից—  
3-ն—եւ:

ե) Մայըրը պիտի լինի հեղաբարո, խաղաղ,  
բայց վոչ շատ վախկոտ, իսկ արուն՝ ուժեղ, հան-  
դունդն, եներգիկ:

զ) Մորթին գույնի, փափկության, փայլի  
և խտության կողմից ըստ իր տեսակի թերու-  
թյուններ չպիտի ունենա:

ը) Ցեղային ճագարները հարուստ պիտի լի-  
նեն այն հատկություններով, վորոնք շեշտված  
են այս կամ այն տեսակի նկարագրության մեջ:

### ԻՆՉՊԵՍ ՍԶՆՎԱՑՆԵԼ ՃԱԳԱՐՆԵՐԸ

Չպիտի մոռանալ, վոր կենդանիներն իրենց  
սերնդին ժառանգաբար տալիս են վոչ միայն  
ստացած հատկություններն, այլ և իրենց սեփա-  
կանը:

Հաճախ պատահում են և այնպիսիներն, վո-  
րոնք բնությունից առանձնապես ոժոված են լի-  
նում իրենց ժառանգած դրական կողմերը տա-  
լու իրենց սերնդին:

Այդպիսիները ճանաչելու հատուկ նշաններ

չկան Ըստհանուր առմամբ կարող ենք ասել,  
վոր զարյուն ճադարներն են միայն, վորոնք  
մեծ մասամբ պահպանում են իրենց ժառան-  
դած հատկությունները:

Յեկ վորպեսզի կարողանանք մեր ցանկա-  
ցած ճադարներն ունենալ, անպայման ոլիտի լավ  
ուսումնասիրենք ունեցած ճադարների դրական  
ու բացասական կողմերը:

Ուսումնասիրության հաշվառքի համար ան-  
հրաժեշտ է ունենալ հատուկ գիրք, ուր պիտի  
դրանցվեն ճադարներն անուն-անուն, նրանց ժա-  
դումն ու հատկությունները:

Դրանցման համարը պիտի ճադարի պարա-  
նոցից կամ վանդակից կախել:

Ուսումնասիրելով մեր ճադարների արժե-  
քավոր հատկություններն, այլև նկատի ունենա-  
լով նրանց առողջությունը, ընտրում ենք հար-  
մարավոր զույգեր՝ նոր ընտանիքներ կազմելու  
համար: Ըստրության միջոցով վոչ միայն ճա-  
դարների ունեցած առավելություններն են պահ-  
պանվում, այլև կարողանում ենք կատարելու-  
թյան հասցնել նրանց ունեցած հատկություն-  
ները: Սակայն միակողմանի զարդացումը շատ  
անդամ ել հասցնում եւ այլասերման: Որինակ,  
յենթադրենք ընտրության յեղանակով կատարե-  
լության ենք հասցըել բազմանալը, վորի դեպ-

քում մայրերը շատ ձագեր են բերում, բայց ցեղը դրա հետևանքով սկսում ե մանրանալ կամ ընկնում ե գերանալու հակումը: Ճագարաբույծը պիտի հետեի, վոր այս կտմ այն առավելության առաջ քաշումով անուշաղը բությոն չմատնվի նրա մնացած դրական կողմերը:

Դրա առաջն ասնելու համար նախ պիտի հաճախակի թարմացնել նրանց, զուգավորելով նույն տեսակի ազգակցական մոստիկ կառ չունեցողների հետ, և յերկրորդ՝ ընտրելու ժամանակ նկատի ունենալ նրա մի շարք դրական կողմերը, վորով ճագարների միակողմանի զարգացման առաջն առած կլինենք:

Մետեղացիայի ժամանակ սխալմունքների մեջ չընկնելու համար պիտի հետեյալը իմանալ՝

ա) Յերբ այս կամ այն տեսակի եղի հետ զուգավորում ենք վորեւե ազնվացեղ, զոմինանորը (գերակշողը) արուն ե լինում: Զուգավորումից ստացած առաջին սերունդը տղնվացեղ կարող ե համարվել միմիայն 50 տոկոսով: Առաջին սերնդի մայրերը յեթե խառնենք նույն հոր հետ՝ տոկոսը կբարձրանա 75-ի, յերբորդ սերնդի ժամանակ—87, իսկ միմիայն 6 րդ սերունդը 100 %

բ) Սկզբնական մետիսները ընտրյալ հայրեր լինել չեն կարող, յեթե նույնիսկ աչքի ընկնոր հատկություններ են կատարվում նրանց մեջ,

վորովհետեւ այդ հատկությունները դեռ նրանց,  
սեփականությունը չեն դարձել:

Եատ անգամ առաջին և յերկրորդ սերուն-  
դի մետիս հակա հորից կարող են ծնվել դաճաճ  
ժառանգներ:

դ) Ընտրության խնդրում առաջնությունը  
տալիս ենք մեծ մասամբ արուներին, վորովհե-  
տեւ ժառանգության խնդրում արուներն՝ եզերից  
շատ ավելի գերակշռող են:

### ՃԱԳԱՐՆԵՐԻ ԶՈՒԳԱՎՈՒՄԸ

Ճագարներին պիտի զուգավորել մի-  
միայն հասունանալուց հետո: Հասունության ժա-  
մանակը մենք արդեն վորոշել ենք տեսակների  
մասին խոսելիս: Արուների հասունացած լինելը  
գլխավորապես գործնականորեն պիտի վորոշել:  
Նրանց ձվերը կախ են ընկնում ու ազատ շոշա-  
փվում, շարունակ հետեւում են եզերին:

Հասունության խնդիրը շատ կարեոր է, վո-  
րովհետեւ սեռականապես տհաս ճագարը սերունդ  
տալու ընդունակությունից զուրկ է:

Զուգավորելու լավագույն ժամանակումի-  
ջոցը համարվում է փետրվարից-հոկտեմբեր ա-  
միսները, հետեւյալ բաշխումով՝ փետրվարի կեսե-  
րին, մարտիսի սկզբին և հոկտեմբերի սկզբին: Այս  
յերեք շրջաններից ամենահաջողը, թե՛ ճագարի

կանոնավոր զարգացման և թե մասնավորապես  
նրա մորթու արժեքավոր լինելու համար, առա-  
ջինն ե, ապա յերկրորդը:

Զուգավորման տրամադիր եղբ հաճախ մեկն-  
վում ե խոտի վրա, կտրառում ե խոտն ու թա-  
փում, յերբ ձեռքներդ մոտեցնում եք, պառկում  
ու մոմում, փետում ե փորի տակի բուրդը,  
բուն շինում, սեռական որդանն ուռչում-կար-  
մրում ե:

Յուրաքանչյուր արու կարող ե բավարարել  
11—15 եղի, որական միայն մեկի հետ պիտի  
լինի և յերկու-յերեք որ ել հանգիստ ունենաւ  
Արույի եներգիան մի քիչ խնայելու համար խոր-  
հուրդ կտայինք 10 եղին միայն մի արու:

Սեռական ցանկություն առաջ բերելուն  
նպաստում ե վարսակով և կարսոսվ կերակրելու:

Յեթե ճագարները պահվում են վանդակ-  
ներում, պիտի եղին զցել արույի մոտ և վնչ  
հակառակը: Հակառակ դեպքում արուն շշկվում  
ե, անծանոթ վանդակում իրեն կորցնում ե: Վան-  
դակում խանգարող իրեր չպիտի լինեն: Լավ ե  
խառնել տակառի մեջ, վորտեղ անկյուններ չկա-  
եգի թագստյան համար: Յեթե զուգավորումը  
արույի վանդակում չի տեղի ունենում, ապա  
արույին մի որ թողնել տակառ՝ ընտենանալու  
համար:

Տակառում կամ վանդակում միասին պիտի  
թողնել 6 ժամ, նույնիսկ ավելի պակաս, յեթե  
համոզված եք, վոր բեղմնավորվել եւ Հաջողվե-  
լու նշաններն են՝ արվի ճշալը և թուլացած կող-  
քի ընկնելը:

Անհաջողության դեպքում լավ եւ 8 որ մեջ  
տալ ապա նորից կրկնել:

Բեղմնավորված եղը արույի մոտ չպիտի  
մնա, այլապես արուն շարունակ կռնհանգստաց-  
նի եղին: Կպատահեն դեպքեր, վոր նույնիսկ  
կքանդի նրա պատրաստած բունք: Բեղմնավոր-  
ված ճագարն, յեթե յերկրորդ անգամ բեղմնավո-  
րվեց, արգանդի յերկյեղջյուր լինելու հետևանքով  
կառաջանա կրկնաբեղմնավորվում եւ և ծննդա-  
բերությունը կանցնի շատ անհաջող և մեծ մա-  
սամբ կվերջանա մոր մահով:

Հղի ճագարն արգեն ինքն ընսղղորեն խու-  
սափում եւ արույի մերձեցումից և դժոհության  
ճիշեր եւ արձակում: Հղի լինելը վորոշվում ե  
10—15 որ հետո միայն: Յեթե մեռած ճագեր ե  
բերում կամ ծնելուց հետո ինչ-ինչ պատճառ-  
ներով նրանք սատկոտում են, այդ դեպքում մի  
ամիս հանդիսա պիտի տալ մորը՝ նրա ուժերը  
վերականգնելու համար:

Մազափոխության շրջանում չպիտի զու-  
գավորել:

## ԶԱԳԵՐ ՀԱՆԵԼՆ ՈՒ ԽՆԱՄԵԼԸ

Ճագարների հղիության շրջանը տևում է 30—32 որ. վերջին որերին մայր ճագարը, յեթե վանդակի մեջ չե, փորում ե գտինը, զլխավորասկես մուտքի մոռերքում, բերանով ծղոտու չոր խոտ ե հավաքում, ներսից պատում փոսր, իր փորի տակից քանդած բրդով փափկացնում փոսր, վանդակում յեղած դեպքումն ել անկյուններից մեկում ե կատարում այդ աշխատանքը, ոգտվելով վանդակում յեղած նյութերից։ Այդ որերին հաճախակի պիտի մաքրել վանդակը կեղտից, առատորեն չոր խոտ, ծղոտ լցնել և անպայման թարմ ջուր դնել նրանց մոտ։

Ծնելու ժամանակ այնքան խիստ ե լինում ծարավը, վոր հանգիստ չի տալիս նրան։

Չուր չգտնելու դեպքում ոկսում ե անհագորեն լիզել ձագերին, մինչև արյուն ե գուրս գալիս, առաջ և ուտում ե յերբեմն ել նյարդայնացած՝ սկսում ե բնից գուրս նետել նորածիններին։

Մայրը ծնելուց հետո, ճագերին հավաքում ե բնի մեջ, ծածկում իր բրդով, վրայից ել ծղոտ կամ խոտ լցնում ե հողով, թշնամիներից ճագերի հետքը կորցնելու համար։

Զագերին կերակրում ե՝ յերբ շուրջը խաղաղ ե, և վոչ վոք նրան չի անհանգստացնում։ Ամեն անզամ կերակրելուց հետո, նորից իր բրդով ծածկում և ձագերին։

Փորի տակից բուրդ պսկելով, նա միաժամակ ձագերի համար հարմարություն ե ստեղծում։ Զագերը ստիճաները գտնում են կաթի հոտով և այնպես ամուր են կաչում նրանց, վոր բաժանելը դժվար ե լինում։ Յեթե կերակրելիս մեկն ու մեկը վրա և հասնում, մայրն անմիջապես հեռանում ե բնից և ստիճաներին կապած ձագերին յետեից քարշ տալով յերեմն բնից հանում։ Նման գեղագերում, յեթե խոկույն ներս չհավաքեն՝ կսառչեն։

Կանոնավոր կերակրելու համար ձագերի բանակը 8-ից ավելի չպիտի լինի։

Յեթե ձագերը 8-ից ավելի յեն, պիտի ավելի ձագերին նույն ժամանակամիջոցում ծնած վորեւ քիչ ձագեր ունցող մոր տակ տեղափորել՝ կերակրելու, մեծացնելու համար։ Դրա համար ել լավ ե մի քանիսին միաժամանակ հղիացնելը և որթ մոր տակ տեղափորելու համար մորը պիտի բնից հեռացնել, տեղափորել ձագերին, ծածկել նոր մոր բրդով, թողնել մեկից-յերկու ժամ առանց մոր ապա նոր թողներ մորը, վորը վոչ մի խորություն չի դնի իր և նոր ընդունված ձագերի մեջ։

Միմիայն յերկարատե փորձը ցույց կտա,  
թե վ՞ր մայրերն են որինակելի՝ կերակրելու,  
ձագերին պահպանելու և ընդհանրապես նրանց  
դաստիարկելու խնդրում։

Պատահում են մայրեր, վորոնք մայրական  
կոչումից զուրկ են։ Աջ ու ձախ ցրում են ձա-  
գերին, շարունակ աեղից-աեղ են փոխադրում,  
հաճախակի նյարդայնանում են, չեն թողնում  
ծծելու, թաթերով հեռուն են քշում, անդամ՝  
խեղղում են։ Նման մայրերից պիտի խուսափել

Վորքան վոր ձագարները ցրտի զիմացկուն  
են, նույնքան ձագերը վախենում են ցրտից, մա-  
նավանդ մինչ 10 որական դառնալը, բրդով կա-  
նավոր ծածկվելը։ Զմեռվա ամենախիստ ցրտե-  
րին անգամ բների նորմալ տաքությունը 12—  
15 աստիճան է Ռ.~ով։ 10 աստիճանից իջնելու  
դեպքում մերկ ձագերը հետզհետե սառչում են։

Մայրերը ձագերին կերակրում են յերկու  
ամիս, յեթե ձագերի քանակը վեցից ավելի չե,  
կարելի յե բավականանալ մեկ և կես ամսով։  
Քանի ձագերը մոր կաթով են սնվում, նրանք  
հիվանդությունների շատ քիչ են յենթակա։ Մեծ  
շատամբ հիվանդանում են մոր կաթից կտրված-  
ները, մանավանդ նրանք, վորոնք անժամանակ  
են կաթից կտրվել։

Ձագերին կաթից կտրելուց հետո, մայրերն

առանձին տրամադրությամբ են հանդիպում առուներին, մանավանդ յերբ 3—4 որ վրայից անցել ե. դրա համար ել զուգավորելու լավագույն չըջանն այդ պիտի համարեր Այդպիսի ժամանակամիջոց ունենալով, յուրաքանչյուր անգամ ծնելու համար, տարեկան ծնելու նորմալ քանակը պիտի համարել 3—4-ի ամառվա յերեկու շոգ ամիսները չհավաքվելով Այդ ամիսներին պիտի թողնել նրանց հանգստանալու և ուժերը վերականգնելու:

Յերեք անգամից ավելի ծնելու գերշռում մայրն ուժասպառ կլինի և ձագերն ել հիվանդուու ու թույլ:

Լավ ե մորը բնից հեռացնելուց հետո, առանձնացնել ձագերին. այս գեղքում ավելի հեշտ ե լինում ձագերի համար բաժանվելու դրության հետ հաշտվել: Բաժանվելուց հետո, մի յերկու որ զիշերները նորից պիտի ծծեցնել փորակեսպի ստինքներում շատ կաթ հավաքվելու հետեւանքով՝ կաթի գեղձերը չբորբոքվեն:

Յուրաքանչյուր ձագի համար առանձին վանդակ հատկացնելու հնարավորություն զժվար թելինի, ուստի լավ ե նման հասակ ունեցողներին խմբավորել 3—5 ճագար մի վանդակում, իսկ յեթե բաժանմունքներով բակ ե, կարելի յերորդ նման հասակ ունեցողներին խմբավորել մի բաժանմունքում:

Առաջին որերը, առանձին ուշադրությամբ  
պիտի հակել համախմբվածներին, վսրովնեան  
դրանց մեջ պատահում ե իրնե կովարար ընտ-  
վորությամբ ճագալներ, վորոնք կարող են զնա-  
սել ուրիշներին:

Այս հասակում կերը պակաս չպիտի աներ,  
այլապես կազդի նրանց կանոնավոր մեծանա-  
լու վրա:

Պատահական սերնդից խուսափելու և եղե-  
րին անտեղի չփաղվեցնելու համար, մեծացեղերի  
5—6 ամսական արուներին և փոքրացեղերի  
3—4 ամսական արուներն աղետք և առանձնաց-  
ներ ցեղի համար ընտրվածներին պահել առան-  
ձին վանդակում, իսկ մնացածներին ամորձա-  
տել (կոտել):

### ՑԱՇԱՐՆԵՐԻ ԿԵՐԱԿՐԵԼԸ

Նագարը գրեթե ուտում ե ամեն տեսակի  
բուլու, ուտում ե նույնիսկ այնպիսի բույսեր,  
վորից հրաժարվում են այլ խոտաճարակներ:

Շատ մեծ բավականությամբ նրանք ուտում  
են միամյա բույսերից՝ ցորեն, գարի, վարսակ,  
հաճար, յեղիպացորեն, կորեկ, վոսալ, սխառու: Այս  
բույսերը կարելի յե ուտեցնել և կանաչ ժամա-  
նակ, մանավանդ կորեկը, ցորենի բացառությամբ:  
Միայն կանաչ տալու դեպքում պիտի հնձել ցո-

դունը չփայտացած ժամանակի Բոլոր հացահատիկների թեփն ողտակար եւ

Մոլտխոտերից առանձնապես սիրում են ու մննդարար և կաթնուլիք մանտվանդ կերակրող մոր և ձագերի համար:

Ճահճային տեղերից հնձած խոտերից պիտի խուսափիլ, թեև ճագարաները շատ անզամ ուտելուց չեն խուսափում, սակայն մնասակար և, մանտվանդ, վոր առանձնապես մննդարար ել չի:

Ճագարները նույնիսկ չեն հրաժարվում գաւոր խոտերից և մեծ ախորժակով կրծում են, յեղերտ, յեղենի (գրեթե բոլոր տեսակի ծառերի տերեները, կեղեն ու թարմ ճյուղերը) բացառությամբ միայն կորիզավոր պառող ունեցող մրգատուներից:

Սննդարար են գրեթե բոլոր արմատապտուղները, գլխավորապես աշնանն ու ձմեռը կերակրելու համար, վորոնցից բացառությամբ գազարի, ցրտահարներն անպետք են, նույնիսկ մնասակար, մանավանդ կարտոֆիլը: Ցրտահար գազարը գոլ ջրի մեջ պահելուց հետո կարելի յե ուտեցնել: Գազարով կերակրելուց ճագարի մորթին առանձին փայլ ե ստանում:

Շաղկամ կարելի յե ուտեցնել և հում և յեփած, նույնն ել ճակնդեղը: Կարտոֆիլն անպայման պիտի յեփել: Լավ ե, ճակնդեղին ու կարտոֆիլին թեփի խառնել:

Առվույշն ողագակար ե, բայց կանաչ առավոյտն և առհասարակլ թիթեռնածաղիկները շատ ուժելուց փորիները ուռչում ե և ստամոքսը թուշանում, վորին և զոհ են գնում ճագարները, առանձնապես մատղաշները:

Կաղամբ շատ տալուց ել պիտի խուսափել, մանավանդ ամառը:

Վնասակար կեր են վորոնցով յերբեք չպիտի կերակրել.

1) Կարտոֆիլի, լոբու ցողուններն ու տերմները, մորմը, թունավոր փրոմբ, ծիծեռնախոտը, արջնկույզը, խաշխաշը, սպանաղը, աղվեսախաղողը և բոլոր սոխարմատները՝ սոխ, սխտոր և այլն:

Յերբ ճագարները մնվում են մեծ մասամբ կանաչով ու արմատապտուղներով, ջրի մեծ կարիք չեն զգում: Զուրն անհրաժեշտ ե նրանց չոր սննդի հետ ու առանձնապես շոգերին ու ծնելու ժամանակ: Տված ջուրը չափազանց մաքուր ու թարմ պիտի լինի, ջրի մնացորդը չպիտի թողնել նրանց մոտ: Վորպեսզի կեղառտելուց հետո չխմեն:

Զագերին կերակրելու շրջանում հնարավորության սահմաններում լավ ե ջրի փոխարեն մայրերին տալ այծի կաթ, 50 տոկոս յեփած ջրի հետ խառը:

Հղիացած մորն առաջին յերկու շաբաթում  
խիստ շատ չպիտի կերակրել, իսկ վերջին յեր-  
կու շաբաթում այնքան, ինչքան կարող ե ուտել:  
Վարսակից այդ շրջանում պիտի խուսափել, ա-  
վելի լավ ե վերջինիս փոխարեն դարի տալ:

Ցեղի համար պահպող արուներին պիտի  
բազմազան կեր տալ, մեծ մասամբ աննդարար,  
վարսակը լավ ե աղղում սեռական եներգիայի  
վրա:

Զահել արուներին, մինչ կատարյալ հասու-  
նանալը պիտի խուսափել զբգուղ կերեր տա-  
լուց, կարոս, գինձ, վարսակ և այլն, վորպեսզի  
սեռական զարգացումը կատարվի նորմալ պայ-  
մաններում: Առհասարակ մատղաշ ճագարներին  
առատ կերակրելը լավ ե աղղում նրանց վոս-  
կորների աճելու վրա և ամրանալու վրա (աճ-  
ման չափը կը կնապատկվում ե):

## ՄՆՆԴԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԲԱԼԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կերերի վորոշ խառնուրդ կատարելու համար  
անհրաժեշտ ե տրված կերի բաղադրության հետ  
ծանոթանալը:

Կենդանիների կերը բաղկացած է սպիտա-  
կուցից (պըոտեյին), ածխաջրերից (կրախմալ),  
շաքար և այլն (ճարպերից, ջրից դանաղան ա-  
ղերից և կետչատկայից):

Այս բոլոր մասերի կարիքն ել զգում է կենդանին և մեկն ու մեկի պարբերական պակասը սննդի մեջ առաջ ե բերում հիվանդագին վիճակ և մինչև անդամ հասցնում մահվան:

Բնդհանրապես սպիտակուցային նյութերը պիտի հարտքերվին ածխաջրերին, ճարպին, ինչպես 1:5, փոքր հասակում սպիտակուցայինն ավելի, իսկ 6 ամսից հետո՝ սպիտակուցայինը պակաս:

Բոլոր բույսերը վերև հիշած բաղադրիչներից միաչափ չեն պարունակում: Կան բյույսեր սպիտակուցայիններով հարուստ, կան՝ ածխաջրերով հարուստ և այլն:

Կանաչ խոտաբույսերի 75 տոկոսը ջուր և, 25 տոկոսը չոր նյութ, վորից միջին թվով 3 տոկոսը սպիտակուց և, 0,8 տոկոսը ճարպ, 1,3 տոկոսը ածխաջրեր, 6 տոկոսը բջիջանյութ, 2 տոկոս աղեր: Շատ լավ չորացնելու դեպքում ել ջրի պակասը կանգնում ե  $10^0/_{\text{0}}\text{-ի}$ :

Դարմանը խոտից ավելի աննպաստ ե, մանավանդ, յեթե նկատի ունենանք, վոր նրա անմարսելի նյութերն ավելի շատ են, քան թե խոտինը: Արմատապտուղները պարունակում են 70—80 տոկոս ջուր, 4,5 տոկոս սպիտակուց, 0,3 տոկոս ճարպ, 21,5 տոկոս ածխաջրեր, 1 տոկոսի մոտ աղեր: Ճագնդեղի շաքարամասերն ուլային գերակշռում են: Հացահատիկներն սպի-

տակուց պարունակում են 8—10 տոկոս, ճարպ  
1—1,5 տոկոս ածխաջրեր (կրախմալ) 73—75  
տոկոս, աղեր 1—2 տոկոս, ջուր 10—15 տոկոս:  
Սիսեռը ջուր պարունակում է 15 տոկոս, սպի-  
տակուց 23 տոկոս, ճարպ 2 տոկոս, ածխաջրեր  
57,5, աղեր 2,5 տոկոս:

Վուշը, կանեփը, քունջութը առանձնապես  
հարուստ են ճարպով: Վուշի հատիկը պարունա-  
կում է 36,5 տոկոս ճարպ, 23 տոկոս ածխաջր-  
եր, և 24 տոկոս սպիտակուց:

Կաթը պարունակում է ջուր 87 տոկոս  
սպիտակուց 3,5 տոկոս, ճարպ 3,5—4 տոկոս,  
ածխաջրեր 5 տոկոս, աղեր 0,7 տոկոս:

Խոտաճարակ կենդանիների կերի 1 միավո-  
րը (400 գր. գարի) հավասար է 1,6 կ. չորաց-  
րած վատ խոտի, 1,2 կ. միջակ խոտի 0,8 կ.  
լավ խոտի, 1,6 կ. հարդի, 3,2 կարտոֆիլի, 4 կ.  
ճակնդեղի, 3,2 կ. գազարի, 6,1 շաղկամի, 0,6 կ.  
թեփի, 400 գրամ հունդի:

### ԿԵՐԻ ՔԱՆԱԿԻ ՈՐԱԿԱՆ ԲԱՇԽՈՒՄԸ

Կերի քանակի վերաբերմամբ լավագույն  
չափանիշը պիտի համարել Գաղղացկու կաղ-  
մածը:

Ծանոթ. Թվական տվյալները վերցրած են պլոֆ.  
Մակարևակու և Գաղղացկու ձեռնարկներից:  
Հեղինակ

Հառ Դադոյացկու 3,2 կդ. կենդանիք քաշ ու-  
նեցող կերակրող մոր կամ հղի եզի համար ան-  
հրաժեշտ ե որական 51 դր. խոս, վարսակ, 43  
դր.—թեփ, 21 դր.—սիսեռ, 68 դր.—արմատա-  
պտուղ:

Նույն կշռի մնացած ճագարների համար 51  
դր. խոտ, վարսակ 34 դր.—թեփ 34 դր.—սիսեռ,  
13 դր. արմատապտուղ—51 դր.: Յուրաքանչյուր  
400 դրամ կենդանի կշռին (մատղաշ և մայր  
ճագարների համար) որական առաջարկվում ե՝

Վարսակ՝ 15 դր. խոտ՝ 20 դրամ արմատիք՝  
25 դր. կամ վարսակ 15 դր. և խոտ՝ 75 դրամ:  
Իսկ մնացածներին նույն միավորի համար  
5 դր. վարսակ, 20 դր. խոտ՝ 20 դր. արմատա-  
պտուղ կամ թե 5 դր. վարսակ և 50 դր. խոտ  
(չոր խոտ):

Կերը պիտի տալ 3—4 անգամ: Յեթե կընը-  
կատվեն, վոր ճագարները տված կերը չեն վեր-  
ջացնում, պիտի պակսեցնել: Հնացած կերը, մա-  
նավանդ իրենց մոտ մնացածը, չպիտի տալ նը-  
րանց ուտելու, այլապես հաճախակի մարսողու-  
թյան խանգարում կստանան:

Կարելի յե ճաշին ու դիշերը խոտ տալ, տ-  
ռավոտյան՝ վարսակ, սիսեռ, յերեկոյան՝ արմա-  
տապտուղ:

Հունդը կարելի յե տալ թեփի փոխարեն

քիչ քանակությամբ և այն ել ձմեռը կերի վրա  
աղ սլիտի ցանել բուսական կերն առհասարակ  
աղքատ և աղով: Կերակրելու ժամերը հաստա-  
տուն պիտի լինեն, այլապես ճագարները հիշե-  
լով, վոր կերակրի ժամանակն ե, սկսում են ան-  
հանդստանալ: Անհանդստությունից յերբեմն ըս-  
կրսում են դռները կրծստել, կամ ճանկոթել զե-  
տինը:

Ամսական կերն մթերելու համար հետեւյալ  
մոտավոր չափն և առաջտրկվում յուրաքանչյուր  
ճագարի համար:

Հատիկ 3 կգ. (վորից  $\frac{1}{5}$  թեփ և  $\frac{1}{5}$ -ը հունդ)  
չոր խոռ 3 կգ. արմատապտուղ 3 կգ.

Ամառվա շրջանում թարմ խոտն ու խաշած  
վարսակն՝ ճագարների համար ամեն ինչ եւ

## ՄՍԱՑՈՒՆԵՐԻ ԳԻՐԱՑՆԵԼԸ

Առանձնացնելով սերունդի համար ընտրած  
ընտանիքները, մնացած մսացու ճագարների վե-  
րաբերմամբ նպատակ է դրվում կարճ ժամանա-  
կում և սկելի քիչ ծախսով մոխ ու ճարպի քա-  
նակն ու վորակն բարձրացնել: Զափազանց նի-  
հար ճագարներին հանկարծակի զիրացման բե-  
ժիմի չպիտի յենթարկել, թե չե միսը մնում է  
վտիտ ու ճարպակալում ե միայն:

Յերեք տարեկանից մեծ և 6 տամսականից փոքր ճաղարները դժվարությամբ են զիրանում։ Զաղացնելուց մի ամիս առաջ եզերին ազատում ենք կերակրելու պարտականությունից և հետեւ վում, վոր չբեղմնավորվեն։ Արուներին ամորձատումն, վորի մասին հետեւյալ գլխում մանրամասն կխոսենք։

Գիրացման ժամանակամիջոցը տեսում է 3 շաբաթ։ Այդ ժամանակամիջոցում չիպիտի թողնել նրանց վազվզելու կամ շատ մանդալու, դրահամար լավ և պահել նրանց ավելի փոքր վանդակներում։

Առաջին շաբաթը սլիտի կերակրել սովորական յեղանակով, միայն հացահատիկները 50 տոկոս ավելացնել վերպիսզի մատղաշ ճադարների մկանները ամրանան։

Յերկըորդ շաբաթում արմատապտուզների փոխարեն տրվում է ջրալի կերակուր, մեծ մասամբ եփած կարտոֆիլի, ծեծած գարու, հաճարի, վարսակի հետ խառնած, կամ ալյուրի։ Կերակրելուց քիչ առաջ ջուր պիտի տալ։ Վերջին շաբաթը, գիրության վերջին որերին, կամաց-կամաց կորցնում են ախորժակը։ այդ որերին մի քիչ բազմապիտի պիտի գարճնել կերը, համեմելով հոտավետ բույսերով՝ կարոս, սամիթ։ Լավ և կաթ կամ կաթի շիջուկ ավելացնել կերի վրա,

վորը նպաստում ե նրա մսի սպիտակ և փոփոկ լինելուն:

Ժամանակամիջոցը լրանալու ընթացքում կլորվում է ճագարը, կշիռը ըարձրանում է 20—25 տոկոս, ծանրանում ե և դանդաղաշարժ դառնում:

Շրջապատի մաքրությանն առանձին ուշադրություն պիտի դարձնել մեզի հոտը (ճագարի մեզը շատ ուժեղ հոտ ունի) շատ անգամ անցնում է մսին: Կերի ամանները մաքուր պիտի պահել, կերակրի մնացորդը չտալ: Խուսափել այդ շրջանում կծու, դառն և սպեցիֆիկ համ ունեցող բույսերից, որինակ՝ յեղևնին, շաղկամբ, կաղամբը և այլն:

### ԱՄՈՐՁԱՏԵԼԸ

Ամորձատման ոպերացիան անպայման անհրաժեշտ չե, վոր կատարի անասնաբուժը: Հարկավոր ե ոպերացիայի ընթացքում վերին աստիճանի զգուշություն և ծայրահեղ մաքրություն:

Ոպերացիայի ամենալավ հասակն է 5—7ամսականը, աշնան կամ գարնան սկզբին: Փոքր հասակում դժվար ե, վորովհետև ճագարների ձվերը յերկարավուն են և այդ հասակում փոքր, վերքաշելով ոաղմատար խողովակի անցնող ճեղքը վածքը, շատ անգամ անկարելի յե լինում իջեցնել նորից պարկի մեջ:

Ողերացիայի ժամանակ կարիք կա մի կամ յերկու ոգնականի, վորսեսզի հնարավոր լինի անշարժ պահել ճագարին:

Ողերացիայի համար հարկավոր ե ունենալ սուր դանակ, մկրատ, մետաքսի թել (սպիտակը), յոդ, ախտահանիչ հեղուկ (կարբոլյան կամ ուրիշ) և զտված բամբակ: Ճագարին պառկացնում են մեջքի վրա, յերկու կողմից պահում նրան անշարժ վիճակում: Շոշափելով գտնում են ձուն, կամաց սեղմելով իջեցնում են, պարկի պատին սեղմում: Յեթե թաղցրել ե ճեղքը վածքի վերին մասում, մասամի միջոցով ցած են բերում ներքեւ: Հիմքում ամուր ըռնած դանակի ծայրով դիծ են քաշում մաշկի վրա, պարկի բարակ կաշին կտրում են և միջից դուրս ե ցցվում ձուն: Զգուշությամբ պարկից ազատում են ձուն և քիչ դուրս քաշելով, մետաքսի ախտահանված թելով պինդ կապում են սաղմատար խողովակի պարանոցը, մոտավորապես  $1/2$  սմ. ձվից հեռու, թելի ծայրերը կտրում են  $1/4$  սանտիմետրից վոչ կարճ, ապա մկրատով ձուն կրտսում են զգաւշությամբ, այնպես վոր հանգույցը չկտրվի, կամ բացվի: Վերքը յուղում են և շարունակում նույն ձևով կատարել յերկրորդը:

Նոր ամորձատած ճագարը մի շաբաթ առանձնացնում են, վանդակում, ամեն որ տակը

լցնում մաքուր, չոր խոտ, վերքը որ մեջ յուղում. Յեթե բարդություններ չեն առաջացել մի շաբաթվա ըրթացիում վերքը գրեթե առողջանում եւ:

Յերկու գեպքից պիտի խիստ զգուշանալ՝

ա) Յեթե կազը ձգած չե, վերքից արյունահոսություն ե սկսվում, վոր կարող ե արնաքամության հասցնել:

բ) Յերբեմն աշխատանքը չափարտած, ճաղարի անակնկալ շարժումներից, ձուն ձեռքից բաց ե ընկնում և ձգվում գեսլի սաղմատար խողովակի ճանապարհը, վորտեղից իջեցնելը շատ անգամ դժվար ե հաջողվում:

Անհաջողության չհանդիպելու համար ավելի լավ ե առաջին անգամ խուսափել անձամբ կատարելուց, այլ հրավիրել անասնաբուժի:

Ամորձատելու յերկրորդ ձեն ե իջեցնել ձըգերը պարկի մեջ, ապա մետաքսի թելով ձվապարկի բերանը կապել այնքան ամուր, վոր թեյիրակներով և թե սերմատար խողովակներով արյունն ու սերմը չկարողանան անցնել: Մի շաբաթվա ընթացքում արյան հոսանքի կտրվելու հետեանքով սկսնում, չորանում եւ:

Այս վերջին աեսակի ամորձատման յեղանակը դյուրին ե տնցնում ճաղարի համար, սակայն

յերբեմն ձվերից մեկն վեր ձգվելով թաղնվում  
ե ճեղքվածքում: 2 ձվերը լավ շոշափելուց հետո  
միայն պիտի կառել:

### ՄՈՐԹՈՒ ՅԵՎ ԲՐԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ

Ճագարները տարեկան 2 անդամ փոխում  
են իրենց բուրդը՝ աշնանն և գարնանը: Բուրդը  
փոխելու շրջաններում հսարափորություն պիտի  
ստեղծել նպաստելու, վոր բուրդն արագ փոխեն: Ամենից առաջ լավ պիտի կերակրել, վորովհետեւ  
բրդափոխությունը նրանց հյուծում եւ լավ և  
հաճախակի ուտեցնել առվույտ, կարոս, քուսով,  
զազար, ճակնդեղ: Վազվզելը նույնպես նպառ-  
տում ե մազերի արագ թափելուն:

Անգորական ճագարների բուրդը մի ամսա-  
կան հասակից սսկած գոնե ամիսը մի անդամ  
փայտե սանրով զգուշությամբ պիտի սանրել  
այնպես վոր սանրի ատամները մարմինի վրա վեր-  
քեր չառաջացնեն:

Հավաքած բուրդը լցնել ապակյա աճոթի  
մեջ, հատակին դնել բարակ թղթում փաթաթած  
մի կտոր չոր կամֆորա (քյաֆյուրի) ցեցից զերծ  
պահելու համար և բերանը փակել:

Առհասարակ մորթին լավ պահպանելու տե-  
սակետից պիտի հետեւ—մտքուր պահել, սան-  
րելը վոչ միայն միջոց ե աղվամազն հավաքե-

լուն, այլ և մյուս կողմից նա մաքրում եւ մա-  
զերը կեղառառությունից, պոկված մազերից, թե-  
փից, այլ և շփումբ արյան հոսանքը դեպի կտ-  
շին ուժեղացնում եւ:

Մորթին հանելու լավագույն ժամանակը թե  
մսի ողտադնբօնանն եւ թե մորթու տեսակետից՝  
խոր աշունն եւ, նույնիսկ ձմեռը (հունվար ամ-  
սին):

Ճագարի մորթին կարելի յե հանել ամբողջ,  
առանց և փորի կարվածքով:

Յերկու դեպքումն ել պիտի մաշկել մորթե-  
լուց հետո անմիջապես:

Մորթելուց հետո պիտի թողնել կողքի վրա  
ընկած 5 բողեյի չափ, վորի ընթացքում սեղ-  
մվում եւ մեզափամփուշտը ապա ականջներից  
բռնած պահում եք մի բողեյի չափ, մեզափամ-  
փուշտից մեզանցքով դատարկվում եւ պարկի մե-  
զը: Մեզապարկի դատարկումն անհրաժեշտ եւ,  
վորպեսզի մեղի հոտը մսին չկպչի:

Ապա հետին վոաքերի կողմից սկսում են  
քերթել ինչպես վոչխարը, մի քիչ քերթելուց հե-  
տո՝ հետին վոաքերը կատում են վորեն տեղից  
ու մորթին շըջելով զգուշությամբ ձգում հա-  
նում: Մորթին յեթե ամբողջությամբ եւ հանված  
(թաթերը, պոչը, ականջները, դունչը հետը), ա-  
պա նա ավելի արժեքավոր եւ Մորթին հանելուց

հետո, դանակի բութով պիտի հանել մորթու վրա  
մնացած մսի, յուղի կոշտերը, ապա աղել և չո-  
րացնել կամ թե մի լիտր տաք ջրին խառնել 35  
գրամ աղ, 29 գրամ շիր, գոլ ժամանակ լցնել  
տաշտի մեջ, բուրդը ներքեւ մորթին փռել ու թող-  
նել 3 որ. 3 որից հետո հանել, մկանի և ճարպի  
շերտերի մնացորդներից աղատել, 2 որ ել թող-  
նել տաշտի մեջ բուրդը վերև, ապա կախել չո-  
րացնել թաց մորթին տախտակի վրա քաշած  
պիտի չորացնել: Մորթին չորացնելուց հետո,  
բուրդը ներսի կողմը պահելով, կաշին զգուշու-  
թյամբ պիտի տրորել քաքսել վորեւ կոշտ բանի  
(փայտի կամ հաստ թոկի) մինչեւ վոր սպիտակի  
ու փափկանա:

## ՍՈՒՌՁԱՊԱՀԱԿԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ճագարները ցրտին դիմանում են առանց  
նեղվելու, միայն նորածիններն են վոր պահան-  
ջում են արտաքին տաքություն +3 աստիճ.  
Ռեմ., իսկ բնի մեջ +13 — 15 աստիճ.: Խոնա-  
վությունն ու միջանցիկ քամին ճագարների հա-  
մար միանգումայն կորստաբեր են, ուստի ճագա-  
րանոցը հիմնելիս այս յերկու խնդիրներին հիմ-  
նական տեղ պիտի տալ այլապես ընդմիշտ վր-  
տանգված կլինեն ճագարները:

Ճագարաբուծության ամենայերկուզալի թրշնամիներն են համաձարկալին բնույթի կրող հիվանդությունները:

Մենք արդեն ասել ենք, վոր վանդակալին սխտեմը մասամբ կարողանում է համաձարկի թափն իջեցնել: Ամենից առաջ նոր ստացած ճագարները, վորոնք յերկու շաբաթվա առանձնացման չեն յենթարկված, չպետք է բաց թողնել ճագարանոցում: Պիտի հսկել թե ճագարանոցի ընդհանուր մաքրության և առանձնապես կերի ամանների, մտնավանդ թաց կերի, ու ընդհանրապես վանդակին:

Ամիսը մի անգամ անկախ համաձարակից, ճագարանոցը յուր բոլոր մասերով ախտահանության պիտի յենթարկել: Նեխված, մզլած կերով յերբեք չպիտի կերակրել:

### ՃԱԳԱՐՆԵՐԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Ճագարների թշնամիներից են կատուն, շունը, մկները, արնետը և այլն:

Հիշված կենդանիները ուտում են ճագարների ճաղերին, մինչև անգամ 2—3 ամսական հասակում: Յեկ կենդանական աշխարհում վորպես բացառություն, ճագարները իրենց ճաղերին պաշտպանության համար վորեն դիմադրություն չեն հայտնաբերում:

# ՑԱՆԿ

Ցերես

1.	Յերկու խոսք	3
2.	Ճագարների ճագումը	7
3.	Ճագաբարուծության նշանակությունը՝ զյուղատնտեսության մեջ և նըանից ստացած մըթերքները	10
4.	Մսի համեմատական բազադրությունը	13
5.	Ճագարների տեսակները	15
6.	Հասաբակ ճագարներ	15
7.	Ազնվամորթ	17
8.	Մսացուներ	24
9.	Բըտոտ	27
10.	Վմբ տեսակի ճագարների պահելն և ավելի ձեռնտու	31
11.	Ճագարների տարիքը	32
12.	Պահելու յեղանակները	33
13.	Ցեղային ճագարների ընտրությունը	39
14.	Խնչակի ազնվացնել ճագարները	40
15.	Ճագարների գուգավորումը	43
16.	Զագեր հանելն ու խնամելը	46
17.	Ճագարների կերակրելը	50
18.	Մննդամթերքների բազադրությունը	53
19.	Կերի քանակի որական բաշխումը	55
20.	Մսացուների գիրացնելը	57
21.	Ամորձատելը	59
22.	Մորթու և բրդի պահպանումը	62
23.	Առողջապահական անհրաժեշտ պայմաններ	64
24.	Ճագարների թշնամիները	65



ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220039209

(304.)  
ԳՐԱԴԱՐԱՆ 10 ԿՈՓԵԿ ՄՈԱ. (2 ՄԱՄՈՒ)

A II  
39209

513-



Г. МЕКЯН

**Руководство по разведению кроликов.**

Госиздат ССР Армении  
Эревань—1930